ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

05.07.2022 18:19

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը շնորհավորական ուղերձ է հղել Սահմանադրության օրվա առթիվ, որում մասնավորապես ասվում է.

Սիրելի հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առթիվ:

Հուլիսի 5-ը մեր օրացույցի կարևորագույն օրերից մեկն է, քանի որ այն խոսում է Սահմանադրության՝ որպես իրավունքի էության, իրավունքի գաղափարի, ժողովրդի կամքն ու շահերը արտահայտող հիմնարար կարևորագույն փաստաթղթի առկայության և իրավունքի գերակայության ապահովմանն ուղղված մեր ջանքերի և վճռականության մասին:

Վստահաբար, Սահմանադրությունը մեր երկրի իրավական համակարգի հիմքն է, որին պետք է համապատասխանեն մնացյալ օրենքները, ուստի՝ Սահմանադրությունը նաև գաղափարխոսություն է, ազգային արժեհամակարգի ամրապնդման երկաթե փաստաթուղթ:

Սահմանադրության գերակայության ապահովումն ու լիարժեք կենսագործումը պետք է լինի յուրաքանչյուրիս ձգտումը, որովհետև մեծ է Սահմանադրության դերը ժողովրդավարության, իրավական և սոցիալական պետության կայացման գործում:

Կրկին շնորհավորում եմ՝ այն համոզմունքով, որ Սահմանադրության կարևորությունը գնահատելու են Հայաստանի Հանրապետության բոլոր սերունդները:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })